10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Բունիաթյան փողոցի հանրային այգու բարեկարգման և բազմաֆունկցիոնալ սպորտային հրապարակի կառուցման աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը հայտարարել է բաց մրցույթ, որի արդյունքում հաղթող են ճանաչվել կոնստրուկտոր պայմանագրի հիման վրա համատեղ հանդես եկող «ՀԵՐ-ՍՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ն և «ՂԱՐԱԲԱՂՑԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ն: Հանրային այգու բարեկարգման և բազմաֆունկցիոնալ սպորտային հրապարակի կառուցման աշխատանքներն իրականացնելու համար շինարարական կապալի պայմանագիր է կնքվել «ՀԵՐ-ՍՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՂԱՐԱԲԱՂՑԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ, որոնք պայմանագրում համատեղ հանդիսանում են որպես կապալառու: «ՀԵՐ-ՍՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ն կատարելու է խաղալուսների և նստարանների հիմքերի իրականացումը (բնահողի մշակում, խամբարաբեռնե հիմքի պատրաստում), խաղահրապարակի իրականացումը (տարածքի անհարթությունների ուղղում, հիմնատակի բնահողի մշակում, խճային հիմքի կառուցում, խաղաղաշտի սալվածքի բեռնաւացում և ամրանակորում, խաղահրապարակներում ուտիկեն ծածկույթի կառուցում), եզրաքարերի տեղադրումը, անցուղիների արտաքին աշխատանքները (կարմիր մշակված լվացված խարամի շերտի ստեղծում արահետներում, մետաղական նստարանների պատրաստում և տեղադրում), խաղահրապարակների մարզասարքերի մետաղական կոնստրուկցիաների (մետաղական հենախյուսեր, ֆուտբոլի դարպասների մետաղական հենք, բասկետբոլի խաղաղաշտի զամբյուղներ) պատրաստումը և տեղադրումը, էլեկտրական լուսավորության աշխատանքները, արտաքին լուսավորության հողային աշխատանքները (հենալուսների տեղադրում, օդային գծի անցկացում, լուսավորության վահանակի, ժամային ռելեյի, արտաքին լուսավորության լուսատուների տեղադրում), տանիքի կառուցման աշխատանքները, հարդարման աշխատանքները: «ՂԱՐԱԲԱՂՑԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ն իրականացնելու է արտաքին ջրամատակարարման հողային աշխատանքները, փնտաժային աշխատանքները (խողովակների տեղադրում և միացում գործող ջրագծին, ջրամատակարարման դիտահողի բետոնյա պատերի և հատակի կառուցում, ցանցի փորձարկում), արտաքին կոյուղու հողային աշխատանքները (բնահողի մշակում և ետլիցք), ե/բ դիտահողի կառուցումը, ջրագծի ներքին տեղամասի աշխատանքները (մետաղապլաստ խողովակների, փականների, ջրաչափի և ծորակի տեղադրում, խողովակաշարի փորձարկում), կոյուղագծի ներքին տեղամասի աշխատանքները (պոլիէթիլենային խողովակների, լվացարանի և գուգարանակոնքի տեղադրում, համակարգի հիդրավլիկ փորձարկում): Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8.834.107 (ութ միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար մեկ հարյուր յոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Ընդ որում՝ տվյալ ծրագրի շրջանակներում 8.001.701 (ութ միլիոն մեկ հազար յոթ հարյուր մեկ) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքներն իրականացվելու են «ՀԵՐ-ՍՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից, իսկ 832.406 (ութ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր վեց) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքներն իրականացվելու են «ՂԱՐԱԲԱՂՑԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից: Նշված երկու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները հաստատվելու են նրանցից յուրաքանչյուրի հետ ստորագրված կատարողական ակտերով և այդ ակտերի հիման վրա ներկայացված առանձին հաշիվ-ապրանքագրերով: Ակնկալվում է, որ տվյալ ծրագրի շրջանակներում հարակից ճանաչված գործարքի ներքո ԱԱՀ-ից ազատում կտրամադրվի առանձին՝ համապատասխանաբար «ՀԵՐ-ՍՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից և «ՂԱՐԱԲԱՂՑԱՆ-ՇԻՆ»
--	---

		ՄՊԸ-ի կողմից կատարված աշխատանքների գումարների չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Գավառի Տարածքային Ջարգացման Ծրագրի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային առևտրի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

/ Շաղիկ Մարուխյան *K. Mayar*



2/6-14



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 օգոստոսի 2014 թվականի N Մ - 763 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-628-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԲԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 30-ի N 07/80-2/10696-14 և հուլիսի 25-ի N 06/3-3/10324-14 եզրակացությունները և հաշվի առնելով Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի 2014 թվականի հուլիսի 18-ի N 014/074 գրությունը, **ո Ր Ո շ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 14-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի շինվերանորոգում» ծրագրի մասին» N Մ-628-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին և 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «43,226.91 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «51,331.39 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):


2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «ՀՀ Հայաստանի Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի շինվերանորոգում»



ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նպաստել շարունակական բժշկական կրթության մատչելիությանը և տարեկան գրադարան համախառն առողջապահական ոլորտի մինչև 50 000 մասնագետների մասնագիտական զարգացմանը ՀՀ Առողջապահության նախարարության Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի վերանորոգելու միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Այնպիսիում ենք ԱԱՀ-ից ազատում
3.	Բարեգործը	Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ
4.	Ծրագիրը կատարողը	Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Մ. հորենացի 22, ՀՀ ՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ուլիսյանցի փ. 29/3 Բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջան	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է \$ 51 331.39 (Հիսունմեկ հազար երեք հարյուր երեսունմեկ ԱՄՆ դոլար և երեսունմեկ ցենտ) համարժեք ՀՀ դրամ
7.	Բյուջեի զուգորդման պայմանները	ՀՀ ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարան ՊՈԱԿ, ք. Երևան, Ուլիսյանցի փ. 29/3
8.	Բյուջեի զուգորդման ժամկետը	4 հունիսի, 2014թ - 04 նոյեմբերի 2014 թ
9.	Միջոցառումների նպատակը, ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսերը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի վերանորոգումը, որը ներառում է ընթերցարարի, համակարգչային և ուսուցողական կենտրոնների աշխատանքայինները:

21/9/10.2

	վերը նշված աշխատանքները նախատեսվում է իրականացնել 04.06.2014 - 04.11.2014 ժամանակահատվածում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է \$ 51 331.39 (Ֆիսունմենկ հազար երեք հարյուր երեսունմեկ ԱՄՆ դոլար և երեսունմեկ ցենտ) համարժեք ՀՀ դրամ: Երևանում գտնվող աշխատանքների տեխնիկական բնութագիրը և ծավալագրությունը ներկայացված են պայմանագրին կից հավելվածներում:
10	Չեռք թերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների հանձնատու նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը



21.9/10.2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2014 թվականի N Մ - 764 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱՔԵՐՂ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 30-ի N 07 /80-2/10749-14 և հուլիսի 29-ի N 06/3-3/10436-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գամմա էլեկտրիկս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00098479) հետ 2014 թվականի հուլիսի 15-ին կնքված N 27/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 572,520 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2014 թվականի N Մ - 765 - Ա
(Որոշումն ընդունվել 2014 թվականի օգոստոսի 1-ի նիստին)
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 07/80-2/10779-14 և հուլիսի օգոստոսի 2-ի N 06/3-3/11029-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Գոռտիգ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01802276) հետ 2014 թվականի հուլիսի 15-ին կնքված N 27/Մ-Ե պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե սալերի և թասակների մատակարարում՝ 1,933,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2014 թվականի N Մ- 766 -Ա

(Որոշումն ընդունվել 2014 թվականի օգոստոսի 1-ի նիստին)

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ) (N1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 1-ի N 07/80-2/11008-14 և օգոստոսի 1-ի N 06/3-3/11089-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի մարզի Սարդարապատ, Արագածավան և Արտենի համայնքների համար խաղաղապարակի պարագաների պատրաստում և տեղադրում՝ 1,963,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2014 թվականի N Մ - 767 - Ա

քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-447-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 30-ի N 07/80-2/10655-14 և հուլիսի 30-ի N 06/3-3/10668-14, եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1065-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» N Մ-447-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «25,845,516 դրամ» բառերը փոխարինել «44,657,018 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 օգոստոսի 2014 թվականի N Մ- 768 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՂԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/10428-14 և հուլիսի 25-ի N 06/3-3/10328-14, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի հուլիսի 23-ի N 1/01/3/11554-14 եզրակացությունները և հաշվի առնելով Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի 2014 թվականի հուլիսի 14-ի N AD/41 գրությունը, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) որոշման 1-իո կետում «3,240,000 դրամ» բառերը փոխարինել «147,240,000 դրամ» բառերով.
- 2) ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից
«29» հուլիս 2014թ.

«ԿՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՏԱՐԱՆ»

Մ Ր Ա Գ Ի Ր


1.	Մշակող նպատակը	Կենսաբազմազանության հարուստ և վտանգված տարածքներում՝ ինչպիսիք են այգեղցների, արգելավայրերի բուֆերային գոտիները, ՀՀ հարմիր գրքում գրանցված կենդանատեսակների և բուսատեսակների համար կարևոր միջոցառումները, նշված կենսական միջավայր հանդիսացող տարածքների պահպանումը, նշված տարածքների հարակից համայնքների դարձրածությունների և երիտասարդների համար հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և տարածքային կենտրոններում բնապահպանական կրթության անվճար դասընթացների պարբերաբար կազմակերպումը, համապատասխան դասընթացների միջոցով տեղաբնակչության կողմից բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը նպաստելն ու աջակցելը. էկո-տուրիզմի զարգացմանն ուղղված գործնական անվճար դասընթացների կազմակերպումը, ինչի արդյունքում տեղի բնակիչները կունենան լրացուցիչ նկատի աղբյուրներ, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը, ներգնա էկո-տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, գյուղական համայնքների ջրամատակարարման բարելավումը, ինչպես նաև այլընտրանքային էներգիայի օգտագործմանը նպաստելն ու աջակցելը:
2.	Մշակող բարեգործական դրական նպատակը	Մշակատեղում է ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:



2

3.	Բարեգործը	Օրագիրը ֆինանսավորում են՝ Երիտանական Համաշխարհային Հողային Միավորումը/ British World Land Trust - 180,000 եվրոյին համարժեք դրամ չորս տարվա համար Կովկասյան Բնության Հիմնադրամը/Caucasus Nature Fund -30,000 եվրոյին համարժեք դրամ չորս տարվա համար «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի Գերմանիայի մասնաճյուղը / E.V. Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets Germany -50,000 եվրոյին համարժեք դրամ չորս տարվա համար Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 3,240, 000 ՀՀ դրամ՝ չորս տարվա կազմակերպչական ծախսերի համար Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 4,000, 000 ՀՀ դրամ՝ չորս տարվա Էկոտուրիզմի զարգացման ծախսերի համար Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներից շուրջ 140,000, 000 ՀՀ դրամ՝ մեկ տարվա այլընտրանքային էներգիայի օգտագործման և գյուղական համայնքների ջրամատակարարման բարելավման ծախսերի համար
4.	Օրագիրը կատարողը	Օրագիրն անմիջականորեն կազմակերպող և իրականացնող է հանդիսանում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (գործ. հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 20, ՀՎՀՀ՝ 02565835, հեռ. 010 55 52 09)
5.	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Օրագրի իրականացման վայր են հանդիսանում ՀՀ բոլոր մարզերը: Օրագրի ուղղվածությունը բնապահպանական և կրթական է՝ ուղղված համայնքների զարգացմանը և աղքատության կրճատմանը:
6.	Օրագրի բյուջեն	Օրագրի արժեքն է՝ չորս տարվա համար մոտ 260,000 եվրոյին համարժեք դրամ և 147, 240,000 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Օրագրում ընդգրկված են՝ -սոցիալապես անապահով գյուղացիներ և համայնքի բնակիչներ, ովքեր ձեռք բերած գիտելիքների արդյունքում հնարավորություն կունենան ստանալ լրացուցիչ եկամուտ՝ վնաս չհասցնելով շրջակա միջավայրին,


Ա՝ 9/10.4



3

		համայնքների 18-25 տարեկան գործազուրկ երիտասարդներ և պատանիներ, ովքեր չունեն այլ եկամուտ, ինչի արդյունքում արտագաղթում են հայրենի գյուղերից, երիտասարդ և տարեց կանայք ու աղջիկներ, ովքեր ձեռք բերած գիտելիքների արդյունքում կարող են տնային պայմաններում պատրաստված արտադրանքը իրացնել տեղական շուկաներում, -սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր կարող են գիշերակաց և նախաճաշ տրամադրել զբոսաշրջիկներին, -տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց բյուջեն ծրագրի իրականացման ողջ ընթացքում կունենա լրացուցիչ մուտքեր, -համայնքների 7-16 տարեկան դպրոցահասակ երեխաներ ու պատանիներ, որոնց շրջանում անհրաժեշտ է ձևավորել սեր և հոգածություն իրենց հայրենի բնության նկատմամբ: Ընդհանուր առմամբ ծրագրի շահառուներն են հանդիսանում համայնքների բնակիչները: Օրագրի ընթացքում ձեռք բերված գույքն ու այլ ապրանքները ծրագրի ավարտին կհանձնվեն համայնքներին՝ անհատույց օգտագործման իրավունքով:
8.	Օրագրի իրականացման տևողությունը	Օրագիրը շարունակական է և իրականացվում է 2010թ.-ից, այժմ որակավորման է ներկայացվում 2013թ. նոյեմբերի 30-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը իրականացվելիք ծրագիրը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և օգնականները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսը	1. Տարածքի պահպանման ծախսեր 4 տարվա համար 1.1 Վտանգված կենդանատեսակների և բուսատեսակների միգրացիոն ուղիների, կենդանիների բնադրավայրերի և տարածքի պահպանման ծախսեր (այդ թվում՝ երկրաչափական, կադաստրային և այլ ծախսեր՝ 2014-2017թթ. ընթացքում)-60,000 եվրոյին համարժեք դրամ, 1.2 Տարածքի հսկողության և պահպանման համար նախատեսված մեքենաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-35, 000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.), 1.3 Մեքենաների վերանորոգման և սպասարկման ծախսեր-6,000 եվրոյին համարժեք

Ա՝ 9/10.4



4

մ (2014-2017թթ. ընթացքում):

2. Գիտական աշխատանքների կազմակերպում 4 տարվա համար

2.1 Կենսաբազմազանության մշտադիտարկման, պահպանվող տարածքներին կից տեղաբնակների մրգատու/բանջարանային այգիների պահպանման պարագաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-9,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում),

2.2 Անտառապահների համար նախատեսված արտահագուստ, սարք/սարքավորումների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր- 9,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում):

3. Շառատունկի կազմակերպման ծախսեր՝ տարեկան 2 անգամ, չորս տարվա կտրվածքով՝ 8 անգամ

3.1 Շառերի/տնկիների ձեռքբերման ծախսեր-6,000 եվրոյին համարժեք դրամ չորս տարվա համար (2014-2017թթ. ընթացքում),

3.2 Բահերի, ձեռնոցների, անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր-2,400 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում),

3.3 Ոռոգման համակարգի խողովակների և այլ անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր-9,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.),


3.4 Շառերի հետագա խնամքի հետ կապված դեղորայքի, պարարտանյութերի ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր- 3,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում),

3.5 Ձիերի խնամքի և պահպանման հետ կապված սննդի, դեղորայքի և նախատեսված այլ պարագաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-12,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ. ընթացքում):

4. Բնապահպանական դասընթացների կազմակերպում համայնքներում 4 տարվա համար

4.1 Գրենական պիտույքների, ուսումնառական նյութերի, համակարգչային և այլ տեխնիկայի, կահույքի ձեռք բերման և/կամ ներմուծման ծախսեր-24,000 եվրոյին

4.9/10.4



5

մարժեք դրամ (2014-2017թթ.),

5.1 Կազմակերպության ծախսեր-6,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.),

5.2 Դասընթացներին մասնակցող աշակերտների համար սննդի ձեռքբերում-10,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017 թթ.),

5.3 Դասընթացավարների, մասնագետների գործուղումների, զինքերակացի, օրապահիկի ծախսեր-30,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.):

5. Էկոտուրիզմի զարգացում և շին. աշխատանքներ 4 տարվա համար

5.1 Էկո-զբոսաշրջության համար նախատեսված քայլուղիների, արահետների մշակման ծառայությունների ծախսեր-15,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.),

5.2 Անապահով գյուղաբնակների տների վերանորոգման ծախսեր-20,000 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.),

5.3 Հեծանիվների և էլեկտրական հեծանիվների ձեռքբերման (ներմուծման) ծախսեր-4,000,000 դրամ (2014-2017թթ.),

5.4 Տնտեսական և այլ ապրանքների ձեռքբերման ծախսեր՝ տեղաբնակներին տրամադրելու համար (օտարերկրյա զբոսաշրջիկներին հյուրընկալելու նպատակով)-3,600 եվրոյին համարժեք դրամ (2014-2017թթ.):

6. Կազմակերպչական ծախսեր հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և համայնքային կենտրոնների համար 4 տարվա կտրվածքով

6.1 շուրջ 1,800,000 դրամ՝ բջջային հեռախոսակապի համար


6.2 շուրջ 540,000 դրամ՝ ինտերնետային ծառայությունների համար

6.3 շուրջ 180,000 դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համար

6.4 շուրջ 720,000 դրամ՝ էլեկտրաէներգիայի ծախսեր:

7. Գյուղական չորս (Արագածի, Լուկաշին, Հայկավան և Բերքաբեր) համայնքների ջրամատակարարման բարելավման ծախսեր մեկ տարվա համար (01.08.2014-01.08.2015թ.)



4.9/10.4



6

	խողովակների ձեռքբերման և մոնիտինգի ծախսեր՝ 35 միլիոն դրամ 2 Պոմպերի ձեռքբերման (ներմուծման) և տեղադրման ծախսեր՝ 15 միլիոն դրամ 3 Ջրաչափական դիտահորեր և դիտահորերի կախարիչների ձեռքբերման և տեղադրման ծախսեր՝ 3 միլիոն դրամ 4 Ասֆալտապատման ծախսեր՝ 4 միլիոն դրամ 5 Հողային աշխատանքներ՝ 10 միլիոն դրամ 6 Այլ կյուբեր, կցամասեր՝ 3 միլիոն դրամ 8. Բնության պահպանության ու էկո-կրթության նպատակով այլընտրանքային էներգիայի օգտագործման ծախսեր մեկ տարվա համար (01.08.2014-01.08.2015 թ.) 8.1 Այլընտրանքային էներգետիկ համակարգի ձեռքբերման, ներմուծման (արևային վահանակներ, ջրատաքացուցիչներ, քամու զենեքատորներ, պոմպեր, էլ. հովիվ համակարգեր (էլ. ցանկապատ), արևային կաթիլային համակարգ, և այլն.) ծախսեր՝ 55 միլիոն դրամ, մասնավորապես. Բերդավան, Պարույր Սևակ և Շովազուղ համայնքների մանկապարտեզներում, Ուրցաձոր համայնքի երեք անապահով ընտանիքների տներում, ինչպես նաև Ուրցաձոր համայնքի փողոցային լուսավորության համար 8.2 Համակարգերի փոխադրման, տեղադրման, տեխնիկական աջակցության և սպասարկման ծախսեր՝ 15 միլիոն դրամ (2014-2017թթ.),
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում 22 մարզերում ծախսվում է՝ Շուրջ 101,000 եվրոյին համարժեք դրամ՝ տարածքի պահպանման համար, այդ թվում՝ տարածքի հսկողության և պահպանման համար նախատեսված մեքենաների ներմուծման ծախսեր- 35,000 եվրոյին համարժեք դրամ Շուրջ 18,000 եվրոյին համարժեք դրամ՝ գիտական աշխատանքների կազմակերպման, այդ թվում՝ կենսաբազմազանության մշտադիտարկման, պահպանվող տարածքներին կից տեղաբնակների մրգատու/բանջարանային այգիների պահպանման պարագաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-


41.9/10.4



7

	Եվրոյին համարժեք դրամ և անտառապահների համար նախատեսված հանգուստ, սարք/սարքավորումների ներմուծման ծախսեր- 9,000 եվրոյին համարժեք դրամ Շուրջ 32,400 եվրոյին համարժեք դրամ ծառատունկի կազմակերպման համար, որից ծառերի/տնկիների ձեռքբերման ծախսեր-6,000 եվրոյին համարժեք դրամ, բաժնի, ձեռնոցների, անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծախսեր-2,400 եվրոյին համարժեք դրամ, ոռոգման համակարգի խողովակների և այլ անհրաժեշտ պարագաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-9,000 եվրոյին համարժեք դրամ, ծառերի հետագա խնամքի հետ կապված դեղորայքի, պարարտանյութերի ձեռքբերման ծախսեր-3,000 եվրոյին համարժեք դրամ, ձիերի խնամքի և պահպանման հետ կապված սննդի, դեղորայքի և նախատեսված այլ պարագաների ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-12,000 եվրոյին համարժեք դրամ: Շուրջ 70,000 եվրոյին համարժեք դրամ՝ բնապահպանական դասընթացների կազմակերպման համար, որից գրենական սլիտոյքների, ուսումնառական կյուբերի, կահույքի ձեռք բերման, ինչպես նաև համակարգչային և այլ տեխնիկայի, ձեռքբերման և/կամ ներմուծման ծախսեր-24,000 եվրոյին համարժեք դրամ և դասընթացներին մասնակցող աշակերտների համար սննդի ձեռքբերում-10,000 եվրոյին համարժեք դրամ Շուրջ 38,600 եվրոյին համարժեք դրամ՝ էկո-գրոսաշրջության զարգացման և շին. աշխատանքների համար, այդ թվում՝ տնտեսական և այլ ապրանքների ձեռքբերման ծախսեր՝ տեղաբնակներին տրամադրելու համար (օտարերկրյա գրոսաշրջիկներին հյուրընկալելու նպատակով)-3,600 եվրոյին համարժեք դրամ, հեծանիվների և էլեկտրական հեծանիվների ներմուծման ծախսեր- շուրջ 4,000,000 դրամ Շուրջ 70,000,000 ՀՀ դրամ՝ բնության պահպանության ու էկո-կրթության նպատակով այլընտրանքային էներգիայի օգտագործման և զարգացման համար՝ այդ թվում էներգաարդյունավետ և էներգաձնադր լուծումներ, նորագույն տեխնոլոգիական սարքավորումներ ձեռքբերման (30,000,000 ՀՀ դրամ) և ներմուծման ծախսեր
--	--

41.9/10.4



		(40,000,000 ՀՀ դրամ) Շուրջ 70,000,000 ՀՀ դրամ՝ գյուղական համայնքների ջրամատակարարման բարելավման համար՝ այդ թվում խողովակների, դիտահորերի ձեռքբերման ծախսեր, հողային և ասֆալտապատման աշխատանքների ծախսերի համար, ինչպես նաև պոմպերի ներմուծման ծախսեր Շուրջ 3,240,000 ՀՀ դրամ՝ հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և համայնքային կենտրոնների կազմակերպչական ծախսերի համար:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր հիմնադրամի կողմից ստեղծված մարզային և համայնքային կենտրոնների համար 4 տարվա կտրվածքով՝ Շուրջ 600,000 դրամ բջջային հեռախոսակապի համար՝ տարեկան կտրվածքով և 1,800,000 դրամ՝ չորս տարվա համար Շուրջ 180,000 դրամ ինտերնետային ծառայությունների համար տարեկան կտրվածքով և 540,000 դրամ՝ չորս տարվա համար Շուրջ 60,000 դրամ ջրամատակարարման և ջրահեռացման համար տարեկան կտրվածքով և 180,000 դրամ՝ չորս տարվա համար Շուրջ 240,000 դրամ էլեկտրականության ծախսեր տարեկան կտրվածքով և 720,000 դրամ չորս տարվա համար
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Բնապահպանության նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ, մարզպետարաններ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, այլ առևտրային կազմակերպություններ և իրավաբանական անձինք
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների և կարգրությունը	Հաշվետվություն կներկայացվի դոնորներին, ինչպես նաև սահմանված կարգով ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:



15.9/10.4



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1 օգոստոսի 2014 թվականի N Մ - 769 -Ա
քաղ. երևան

**«ՆԵՈՆԱՏԱԼ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆՈՐԱԾՆԱՅԻՆ
ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 07/80-2/9649-14 և հուլիսի 18-ի N 06/3-3/9692-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 22-ի N 02/5224-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 16-ի N ԱՄ/22.1/7326-14, Հայաստանի Հանրապետության Արարադի մարզպետարանի 2014 թվականի հուլիսի 18-ի N 1/4/1-1/3367-14, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2014 թվականի հուլիսի 23-ի N 01/15/2729-14 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2014 թվականի հուլիսի 18-ի N 01/3997-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 69,434 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Նորածնային վերակենդանացման դասընթացներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ից՝ «Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիա» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ, 1 տեղ, 167 կգ ընդհանուր քաշով, 12,473 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» S/Ս) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարադի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:



ՆԱԽԱԳԻՎ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1. Օրացրի նպատակը	Ներկայացվող ծրագրի նպատակն է ուսուցանել Հայաստանի Հանրապետության Արտաշատ, Գավառ և Գորիս քաղաքների բժշկական կենտրոնների նորածնային վերակենդանացման մասնագետներին, ծանոթացնել նրանց նորածնային վերակենդանացման բնագավառի ամերիկյան առաջավոր մեթոդներին, առողջության կենտրոններին նվիրել նորածնային վերակենդանացման նորագույն գործիքներ և սարքեր, դրանով նվազեցնել նորածնային մահացածության մակարդակը:
2. Օրացրի բարեգործական օրակման նպատակը	Օրացրի բարեգործական օրակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնություններից:
3. Բարեգործը	"Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Գործարար" Շահույթ Չհետապնդող Գազմակերպություն է, հասցեն՝ ԱՄՆ-ի Յութա նահանգ, Սոյթ Լեյք Սիթի քաղաք:
4. Օրացրի կատարողը	Օրացրի կատարողը "Նեոնատալ Բժշկության Հայկական Ասոցիացիա" Հասարակական Գազմակերպություն է՝ ՀՀ, ք. Երևան, Էստեռնական փ, 14շ. բն. 44, ՀՎՀՀ 01232106:
5. Օրացրի իրականացման վայրը և բնագավառը	Օրացիքը իրականացվելու է Արտաշատ, Գավառ և Գորիս քաղաքներում:
6. Օրացրի բյուջեն	Օրացրի ընդհանուր բյուջեն կազմում է 69434.00 (վաթսուհինը հազար չորս հարյուր երեսուկորս) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Օրացրի բյուջեն հաստատվել է "Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Գործարար" հոգաբարձուների խորհրդի կողմից:
7. Բարեգործություն ստացողները	Բարեգործություն ստացողներն են Արտաշատ, Գավառ և Գորիս քաղաքների բժշկական կենտրոնները:
8. Օրացրի իրականացման տևողությունը	Օրացիքը կիրականացվի 2014թ. հունիսի 1-ից և կավարտվի 2015թ. մայիսի 31-ին:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Օրացրով նախատեսված դասընթացների կազմակերպման համար Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 12,473.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժեքով բժշկական գործիքներ, սարքեր և ուսուցողական պարագաներ, որոնք դասընթացների ավարտից հետո նվիրաբերվում են բժշկական կենտրոններին: Իրականացման ժամկետը՝ 2014թ. հունիս-օգոստոս: 2. Նախատեսվում է ծրագրի միջոցներով հրատարակել և մասնակիցներին տրամադրել Նեոնատալ Վերակենդանացման՝ Ամերիկյան Սրտաբանական Ասոցիացիայի և Մանկաբուժության Ամերիկյան Ակադեմիայի ("NRP") կողմից տպագրված "Նորածնային վերակենդանացում" 6-րդ հրատարակության հայերեն թարգմանությամբ մասնագիտական գիրքը, որի համար նախատեսվում է ծախսել 10,812.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Իրականացման ժամկետը՝ 2014թ. օգոստոս-սեպտեմբեր: 3. Դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ պլակատների, վկայականների, պրոյեկտորի գնման համար նախատեսվում է ծախսել 1,972.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Իրականացման ժամկետը՝ 2014թ. սեպտեմբեր: 4. ԱՄՆ-ից հրավիրվող մասնագետների տրանսպորտային, ՀՀ-ում կեցության և սննդի, մուտքի թույլտվությունների, ՀՀ-


	ում տրանսպորտային ծախսերի համար նախատեսվում է ծախսել 29,836.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Իրականացման ժամկետը՝ 2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր: 5. Դասընթացների բանավոր և գրավոր թարգմանությունների, դասընթացների կազմակերպման համար տարածքների վարձակալության նպատակով նախատեսվում է ծախսել 10,029.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Իրականացման ժամկետը՝ 2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր: 6. Դասընթացների 150 մասնակիցների տեղափոխման, գիշերակացի, սննդի, նպատակով նախատեսվում է ծախսել 3,812.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Իրականացման ժամկետը՝ 2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր: 7. Դասընթացների ծրագրի իրականացման արդյունքների ամփոփման և ծրագրի փակման արարողության նպատակով նախատեսվում է ծախսել 500.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Իրականացման ժամկետը՝ 2015թ. ապրիլ-մայիս:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Օրացրով նախատեսված Արտաշատ, Գավառ և Գորիս քաղաքներում կազմակերպվել երկօրյա դասընթացներ այդ քաղաքների բժշկական կենտրոնների նորածնային վերակենդանացման մոտ 150 մասնագետների համար, երանց տրամադրվելով համապատասխան գործիքներ և բժշկական սարքեր, գրականություն և այլ պարագաներ: Օրացրի համար անհրաժեշտ ներքոհիշյալ Գույքը նվիրաբերվում է բարեգործի կողմից և ներմուծվելու է ԱՄՆ-ից. • Թթվածնի խողովակներ՝ 33.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, • ՆԲԴ (նեոնատալ բժշկության դասընթացների) մոդուլ 3-խորացված դասընթացների սարքավորումներ. Խորացված դասընթացների համար նախատեսված սարքավորումներ 5 լրակազմ (Blue Tot և Manneguin)՝ 9827.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, • ՆԲԴ (նեոնատալ բժշկության դասընթացների) մոդուլ 1- Մենդաբերության սենյակի սարքավորումներ. 7 տուփ, որոնք ներառում են. 50 նորածինների վերակենդանացման սարք (այդ թվում՝ 2 դիմակ), 50 խողովակ, 50 սթեթոսկոպ, 25 տեղափոխման պայուսակ՝ 2464.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, • Թթվածնի ռեգերվուարներ՝ 11.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, • Լարինգոսկոպի սպյեր՝ 138.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, Ընդամենը՝ 12473.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: 2. Նախատեսվում է ծրագրի միջոցներով հրատարակել և մասնակիցներին տրամադրել Նեոնատալ Վերակենդանացման՝ Ամերիկյան Սրտաբանական Ասոցիացիայի և Մանկաբուժության Ամերիկյան Ակադեմիայի ("NRP") կողմից տպագրված "Նորածնային վերակենդանացում" 6-րդ հրատարակության հայերեն թարգմանությամբ մասնագիտական գիրքը, որի համար նախատեսվում է ծախսել 10,812.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: 3. Դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ պլակատների, վկայականների, պրոյեկտորի գնման համար նախատեսվում է ծախսել 1,972.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: 4. ԱՄՆ-ից հրավիրվող մասնագետների ժամանման և մեկնման ինքնաթիռի տոմսերի, ՀՀ-ում կեցության և սննդի, մուտքի թույլտվությունների, ՀՀ-ում տրանսպորտային ծախսերի համար նախատեսվում է ծախսել 29,836.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: 5. Դասընթացների բանավոր և գրավոր թարգմանությունների, դասընթացների կազմակերպման համար տարածքների վարձակալության նպատակով նախատեսվում է ծախսել 10,029.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 6. Դասընթացների 150 մասնակիցների տեղափոխման, գիշերակացի, սննդի, նպատակով նախատեսվում է ծախսել 3,812.00 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: 7. Դասընթացների ծրագրի իրականացման արդյունքների ամփոփման և ծրագրի փակման արարողության նպատակով նախատեսվում է ծախսել 500.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

9/3

9/3

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպությունը վարչական ու կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կազմակերպությունը աշխատելու է անմիջապես ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Առողջապահության նախարարության, Արարատի, Գեղարունիքի, Սյունիքի մարզպետարանների, քաղաքապետարանների առողջապահության բաժինների ինչպես նաև ծրագրին մասնակցող բուժհաստատությունների հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է բարեգործի՝ Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի և Կորպորացիայի լիազորված անձի՝ Չարլի Ռեդլիսի կողմից: Ծրագրի կատարողը, ինչպես նաև ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ծրագրի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո սահմանված կարգով ու ժամկետներում Հանձնաժողովին ներկայացնելու է ՀՀ Ծրենդրությանը՝ սահմանված հաշվետվություններ և տեղեկատվություն: Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կադրվելի:

Կազմակերպության նախագահ Հրանտ Կալենտերյան



9/3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**4 օգոստոսի 2014 թվականի N Մ - 770 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի հուլիսի 31-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակել Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված 2009 թվականի արտադրության «Volkswagen Jetta» մակնիշի ավտոմեքենան (1,465կգ, 7,800 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 400 ԱՄՆ-ի դոլար միջնորդավճար, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 1,700 ԱՄՆ-ի դոլար, նույնականացման համարը՝ VIN: 3VWJZ71KX9M099226, ԱՄ ՄՁՄ ՏՄ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ 654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 օգոստոսի 2014 թվականի N Մ - 771 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՐԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/9729-14 և հուլիսի 23-ի N 06/3-2/10031-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 21-ի N ԱՄ/22.1/7481-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականիսարգելման ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (1 տեղ, 1 կգ ընդհանուր քաշով, 25 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 31.96 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 օգոստոսի 2014 թվականի N Մ - 772 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՐԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/9730-14 և հուլիսի 23-ի N 06/3-2/10134-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 21-ի N ԱՄ/22.1/7482-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականիսարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (30 տեղ, 2,461.1 կգ ընդհանուր քաշով, 367,456.25 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 16,989.46 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժօգնություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**1 օգոստոսի 2014 թվականի N Մ- 773 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՐԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/9889-14 և հուլիսի 23-ի N 06/3-2/10130-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 21-ի N ԱՄ/22.1/7510-14 եզրակացությունները, որոշում է.

